ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2021թ. թիվ 16-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 108 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 5-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի թիվ 165-Ն հրամանի 3-րդ գլխի պահանջները՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Սահմանել ներքին աուդիտի կոմիտե՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի համակարգին աջակցելու նպատակով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել, որ մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի քարտուղար է հանդիսանում «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի ներքին աուդիտոր, աշխատանքային խմբի ղեկավար Վ.Սայադյանը՝ առանց քվեարկելու իրավունքի:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2013 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտե սահմանելու և ներքին աուդիտի կոմիտեի կազմը հաստատելու մասին» թիվ 108 կարգադրությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

1/15/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. հունվարի 14
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2021թ. հունվարի 14-ի
թիվ 16-Ա որոշման

Կ Ա Զ Մ
Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի

Ա.Խաչատրյան - կոմիտեի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետ

Վ.Սայադյան - «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի ներքին աուդիտոր, աշխատանքային խմբի ղեկավար, կոմիտեի քարտուղար

Կոմիտեի անդամներ.

Գ.Ասրյան - ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ

Ա.Սահակյան - ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ

Տ.Հովսեփյան - ՀՀ Լոռու մարզպետի օգնական /խորհրդակցական ձայնի իրավունքով/

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

15/01/2021

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ